**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՄԱԾՁԲ-18/4**

ք. Գյումրի «07» ապրիլ 2018թ.

«Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, ԱՁ Ռուբեն Ավետիսյանը, որը գործում ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ծառայությունը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ծառայությունը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ծառայությունը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ծառայությանց, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ծառայության անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ծառայության պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ծառայության և դրա համար վճարելուց, իսկ եթե ծառայության համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ծառայությունը և հրաժարվել մնացած ծառայություններից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ծառայություններից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ծառայության անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ծառայության մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ծառայությունը այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ծառայության մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ծառայությունը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ծառայության ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ծառայության պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ծառայության պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ծառայությունը ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ծառայության քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ծառայության բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ծառայությունը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ծառայության համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ծառայության համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ծառայությունը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ծառայության՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ծառայության մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ծառայության որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ծառայությունը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ԱՁ Ռուբեն Ավետիսյան պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ծառայության պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **343250** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ծառայության մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ծառայությունը ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով Ծառայության մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>10</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ppcm համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ծառայության որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ծառայության մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

---

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

8.6 Ծառայության մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ | ԱՁ Ռուբեն Ավետիսյան |
| ք.Գյումրի, Հաղթանակի 25 | Ք.Գյումրի, Գորկու 67/62 |
| Հ/Հ 247260002750 | <<Արդշինբանկ>>ՓԲԸ Գյումրու մ/ճ |
| Արդշինբանկի Գյումրի մ/ճ | Հ/Հ 2472600240440010 |
| ՀՎՀՀ 05503375 | ՀՎՀՀ 57200149 |
| Տնօրեն՝ Հ.Հարությունյան | Տնօրեն՝ Ռուբեն Ավետիսյան |
| ________________ | ________________ |
| /ստորագրություն/ | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*« 07 » մայիսի 2018թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1. | Թիվ 002 ձևի | A4 /1+1/60գր/քմ սպիտակ օվսեթ թուղթ | հատ | 8 | 49600 | 6200 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 6200 | 15.12.2018թ. |
| 2. | Դեղատոմսային ձևաթուղթ N2 | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/քմ, A5/148x210մմ//1+1/կապույտ գույնի տպագրություն | հատ | 4.02 | 1600 | 400 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 400 | 15.12.2018թ. |
| 3. | Դեղատոմսային ձևաթուղթ N3 | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/քմ, A5/148x210մմ//1+1/սև գույնի տպագրություն | հատ | 3.8 | 14440 | 3800 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 3800 | 15.12.2018թ. |
| 4. | Դեղատոմսային ձևաթուղթ N3 ինքնատպիչով | Թուղթ ինքնատպիչA5/2գույն//1+1/1կոմպլեկտ, | հատ | 14 | 53200 | 3800 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 3800 | 15.12.2018թ. |
| 5. | Ուղեգրեր/մասնագիտական խորհրդատվության կամ լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/քմ, A4/1+0/ սև գույնի տպագրություն | հատ | 6 | 2400 | 400 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 400 | 15.12.2018թ. |
| 6. | Ուղեգրեր սոց փաթեթի շահառուների համար ձև 1 | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/քմ, A5/1+0/ սև գույնի տպագրություն | հատ | 3 | 900 | 300 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 300 | 15.12.2018թ. |
| 7. | Ուղեգիր N3/ներպոլիկլինիկական/, միննույն բուժհաստատությունում լաբորատոր գործիքային հետազոտության | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/քմ, A5/1+0/ սև գույնի տպագրություն | հատ | 3 | 24000 | 8000 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 8000 | 15.12.2018թ. |
| 8. | Արյան հետազոտման պատասխանի ձևաթուղթ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/քմ, A5/1+1/ սև գույնի տպագրություն | հատ | 2.3 | 7800 | 3400 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 3400 | 15.12.2018թ. |
| 9. | Մեզի հետազոտման պատասխանի ձևաթուղթ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/քմ, A5/1+1/ սև գույնի տպագրություն | հատ | 2.3 | 7800 | 3400 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 3400 | 15.12.2018թ. |
| 10. | Բիոքիմիական հետազոտության պատասխանի ձևաթուղթ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/քմ, A5/1+0/ սև գույնի տպագրություն | հատ | 2.82 | 9900 | 3500 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 3500 | 15.12.2018թ. |
| 11. | Կղանքի հետազոտության պատասխանի ձևաթուղթ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/մ2, A5/1+0/ սև գույնի տպագրություն | հատ | 2 | 600 | 300 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 300 | 15.12.2018թ. |
| 12. | Քսուկի հետազոտության պատասխանի ձևաթուղթ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ, A4/1+0/ սև գույնի տպագրություն | հատ | 6 | 6000 | 1000 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 1000 | 15.12.2018թ. |
| 13. | Մուտքի օրդեր | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/քմ, A5/1+0/ սև | հատ | 3 | 750 | 250 | ք.Գյումրի, | 250 | 15.12.20 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | նակի 25 | | |
| 14. | Ելքի օրդեր | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ, A5/1+0/ սև գույնի տպագրություն | հատ | 3 | 450 | 150 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 150 | 15.12.20 18թ. |
| 15. | Մուտքի ֆակտուրա | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ, A5/1+0/ սև գույնի տպագրություն | հատ | 3 | 600 | 200 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 200 | 15.12.20 18թ. |
| 16. | Հղիների փոխանակման քարտ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ, A5/1+1/ սև գույնի տպագրություն | հատ | 4 | 800 | 200 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 200 | 15.12.20 18թ. |
| 17. | Հղիի հսկողության պարտադիր ծավալների հաշվառման ձև/005/ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ, A4/1+1/ սև գույնի տպագրություն | հատ | 6 | 960 | 160 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 160 | 15.12.20 18թ. |
| 18. | Սոնոգրաֆիայի պատասխանի ձևաթուղթ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ, A5/1+0/ սև գույնի տպագրություն | հատ | 3 | 750 | 250 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 250 | 15.12.20 18թ. |
| 19. | Սոցիալական փաթեթի սոնոգրաֆիային պատասխանի ձևաթուղթ | A4 /1+1/60գր/քմ սպիտակ օվսեթ թուղթ | հատ | 8 | 3200 | 400 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 400 | 15.12.20 18թ. |
| 20. | 088 ձև | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ, A4/1+0/ սև գույնի տպագրություն | հատ | 8 | 800 | 100 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 100 | 15.12.20 18թ. |
| 21. | Քաղվածք ամբուլատոր քարտից /մեծահասակ/ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ,, A5/1+0/ սև գույնի տպագրություն | հատ | 4 | 1200 | 300 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 300 | 15.12.20 18թ. |
| 22. | Քաղվածք ամբուլատոր քարտից /մանկական/ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ,, A5/1+0/ սև գույնի տպագրություն | հատ | 4 | 1200 | 300 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 300 | 15.12.20 18թ. |
| 23. | Դեռահասների հաշվ. ձևաթուղթ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ,, A4/1+0/ սև գույնի տպագրություն | հատ | 6 | 1200 | 200 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 200 | 15.12.20 18թ. |
| 24. | Դեռահասների Թմների աղյուսակ | սպիտակ օվսեթ 2թուղթ 60գր/ քմ, A4/1+0/ սև գույնի տպագրություն | հատ | 6 | 1200 | 200 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 200 | 15.12.20 18թ. |
| 25. | 026 ձև դպրոց կամ նախակրթարան հաճախելու համար | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ, 2հատ A4/1+1/ սև գույնի տպագրություն | հատ | 15 | 1500 | 100 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 100 | 15.12.20 18թ. |
| 26. | Պատվաստանյութ երի ձևաթուղթ թիվ 063ձև | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ,, A5/1+1/4հատ սև գույնի տպագրություն | հատ | 15 | 4500 | 300 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 300 | 15.12.20 18թ. |
| 27. | Երեխայի բժշկական քարտ/ դպրոցական, նախադպրոցակա ն հստատության, մանկական համար: Ձև N 5 | սպիտակ օվսեթ թուղթ թուղթ 60գր/ քմ,, A5/1+1/4հատ սև գույնի տպագրություն | հատ | 20 | 2000 | 100 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 100 | 15.12.20 18թ. |
| 28. | Հղիների անհատական քարտ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ,, A3/1+1/ 3հատ | հատ | 50 | 7500 | 150 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 150 | 15.12.20 18թ. |
| 29. | Դեղորայքի պահանջագիր ձև N2 /50կոմպլեկտ/ | Թուղթ ինքնատիպչA4 /3գույն//1+0/1կոմպլեկտ, կազմը խռոմ 300գր/մ2 | կոմպլ եկտ | 1800 | 5400 | 3 | ք.Գյումր ի, Հաղթա նակի 25 | 3 | 15.12.20 18թ. |
| 30 | Գիրք /մատյան/ | սպիտակ օվսեթ թուղթ | հատ | 900 | 4500 | 5 | ք.Գյումր ի | 5 | 15.12.20 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | բուժքրոջ կողմից դեղերի և ԲՆԱ-ի անվանաքանակական հաշվառման 100 թերթ ձև N1 | | | | | | նակի 25 | | |
| 31. | Մատյան 100 թերթ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/մ, A4/1+1/ կազմը խոոմ 300գր/մ2 | հատ | 900 | 22500 | 25 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 25 | 15.12.2018թ. |
| 32. | Երեխայի զարգացման ամբուլատոր քարտ /տղա/ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ,, 28 A5/1+1/ 3/A5/4+4/կազմը 250խոոմ /1+1/կողը կապույտ | հատ | 250 | 42500 | 170 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 170 | 15.12.2018թ. |
| 33. | Երեխայի զարգացման ամբուլատոր քարտ /աղջիկ/ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ,, 28 A5/1+1/ 3/A5/4+4/կազմը 250խոոմ /1+1/կողը կարմիր | հատ | 250 | 37500 | 150 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 150 | 15.12.2018թ. |
| 34. | Մեծահասակների ամբուլատոր քարտ | սպիտակ օվսեթ թուղթ 60գր/ քմ,,30 A5/1+1/ կազմը 250 խոոմ /1+1/ սև տպագրության | հատ | 150 | 15000 | 100 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 100 | 15.12.2018թ. |
| 35. | Գրասենյակային գրիչ | 70գր/ քմ, սպիտակ օվսեթ թուղթ, 70 A4/1+1/ կազմը 400գր. խոոմ | հատ | 450 | 9000 | 20 | ք.Գյումրի, Հաղթանակի 25 | 20 | 15.12.2018թ. |

*Պայմանագրի վերջնաժամկետն է 15.12.2018թ.:

ԳՆՈՐԴ
«Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ
ք.Գյումրի, Հաղթանակի 25
Հ/Հ 24726000275O
Արդշինբանկի Գյումրի մ/ճ
ՀՎՀՀ 05503375
Տնօրեն՝ Հ.Հարությունյան
______________________
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ԱՁ Ռուբեն Ավետիսյան
Ք.Գյումրի, Գորկու 67/62
<<Արդշինբանկ>>ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/Հ 2472600240440010
ՀՎՀՀ 57200149
Տնօրեն՝ Ռուբեն Ավետիսյան
______________________
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 07 » ապրիլ 2018թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1-35 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | **343250** |

ԳՆՈՐԴ
«Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ
ք.Գյումրի, Հաղթանակի 25
Հ/Հ 247260002750
Արդշինբանկի Գյումրի մ/ճ
ՀՎՀՀ 05503375
Տնօրեն՝ Հ.Հարությունյան
________________
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ԱՁ Ռուբեն Ավետիսյան
Ք.Գյումրի, Գորկու 67/62
<<Արդշինբանկ>>ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/Հ 2472600240440010
ՀՎՀՀ 57200149
Տնօրեն՝ Ռուբեն Ավետիսյան
________________
(ստորագրություն)
Կ.Տ

**ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Գյումրի «07» ապրիլ 2018 թ.**

ԱՁ Ռուբեն Ավետիսյան, ի դեմս Ընկերության տնօրեն Ռուբեն Ավետիսյանի,
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ «ԲՊ-ՄԱԱՊՁԲ-18/4»* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

____________________
ընկերության անվանումը

____________________
ընկերության հասցեն

____________________
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

____________________
ընկերության բանկային հաշվեհամարը

____________________
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

____________________
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

*** լրացվում է մասնակցի կողմից*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[2] N**

*(պայմանագրի կատարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ ԱՁ Ռուբեն Մխիթարյան

4. Վճարողի բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ, Գյումրի մ/ճ

5. Վճարողի հաշվի համարը՝ 2472600240440010

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 57200149

7. Վճարողի ՀԾՀ՝ 1903660222

8. Շահառու՝ «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 05503375

10. Շահառուի բանկը՝ Արդշինբանկ, Գյումրի մ/ճ

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 247260002750

12. Գումարը թվերով և բառերով՝

13. Արժույթը (բառերով և կոդով)՝

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում

15. Պայմանագրի ծածկագիրը՝ «ՇԱԾ 2Բ-18/4»

16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները

/____________________/

/____________________/

19.բ. Կ.Տ.

18.ա. Վճարողի ստորագրությունները

/____________________/ [signature]

/____________________/

18.բ. Կ.Տ.

Կատարված է շահառուի բանկի կողմից

20.ա. /____________________/

/ստորագրություն/

20.բ. Կ.Տ.

"___" ___ 20___ թ.

Կատարված է վճարողի բանկի կողմից

21.ա. /____________________/

/ստորագրություն/

21.բ. Կ.Տ.

22. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

## Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը

| Հ/Հ | <<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները | Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը փաստաթղթում | Վավերապայմանի լրացման պահանջը | Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառու կամ վճարողը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | վճարման պահանջագրի համարը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս |
| 2. | ներկայացման ամսաթիվը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը |
| 3. | վճարող | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:Լրացվում է վճարողի կողմից | լրացվում է վճարողի կողմից |
| 4. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 5. | վճարողի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 6. | վճարողի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու | լրացվում է վճարողի կողմից |
| 7. | վճարողի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ | լրացվում է վճարողի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության | շահառուի կողմից՝ հրավերով |
| 9. | շահառուի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 10. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) անվանումը (շահառուի բանկը) | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 11. | շահառուի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 12. | գումարը (թվերով և բառերով) | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 13. | արժույթը (բառերով և կոդով) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 14. | գործարքի նպատակը | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 15. | պայմանագրի ծածկագիրը (համարը) | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը | լրացվում է վճարողի կողմից |
| 16. | փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանները | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին, ինչպես նաև նշվում են վճարողին փաստաթղթերի տրամադրման պայմանները (տրամադրում՝ վճարի դիմաց, տրամադրում՝ ակցեպտի դիմաց, տրամադրում՝ երաշխիքի դիմաց և այլն) | լրացվում է շահառուի կողմից |
| 17. | առդիր էջերի քանակը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի | լրացվում է շահառուիկողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | տրամադրվեն վճարողին | |
| 18.ա. | վճարողի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր<br>այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: Ընդ որում վճարողի կողմից չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը: | ստորագրվում է վճարողի կողմից |
| 18.բ. | վճարողի կնիքը | պարտադիր | պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում | կնքվում է վճարողի կողմից |
| 19.ա. | շահառուի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր, լրացվում է բանկ ներկայացնելիս | ստորագրվում է շահառուի կողմից |
| 19.բ. | շահառուի կնիքը | պարտադիր | պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում | կնքվում է շահառուի կողմից |
| 20.ա. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր | |
| 20.բ. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | պարտադիր | չի լրացվում | |
| 21.ա. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում | |
| 21.բ. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում | |
| 22. | վճարողին | պարտադիր | պարտադիր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | | ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | |